

**2021-2022 ուսումնական տարում Տավուշի մարզի 2-րդ դասարանում սովորողների
ուսումնառության արդյունքների ոչ միավորային գնահատման՝ բնութագրերի ձևանմուշների
վերաբերյալ**

Նախաբան

Հանրակրթության պետական նոր չափորոշչով սահմանվել է, որ 1–4-րդ դասարաններում և 5-րդ դասարանի 1-ին կիսամյակում իրականացվելու է ոչ միավորային գնահատում, իսկ սովորողների ուսումնառության արդյունքների գնահատման նոր կարգի համաձայն՝ յուրաքանչյուր սովորողի համար որպես կիսամյակի ամփոփում կազմվելու է ուսումնական առաջադիմության բնութագիր բոլոր առարկաներից:

Տավուշի մարզի փորձարկող 2-րդ դասարանի ուսալանով նախատեսված բոլոր առարկաների վերջնարդյունքների հիման վրա կազմվել են բնութագրերի հնգաստիճան սանդղակներ՝ որպես օգնություն ուսուցչին:

Յուրաքանչյուր աղյուսակի առաջին սյունակում տրված են տվյալ առարկայի ուսումնական ծրագրով սահմանված թեմաները (ԵՃԱ, Շախմատ, Մաթեմատիկա և այլն) կամ առարկայական չափորոշչով նախատեսված հիմնական հասկացություններն ու ենթահասկացությունները (օր.՝ Մայրենի), իսկ աղյուսակի առաջին տողում ներկայացված են Ա, Բ, Գ, Դ, Ե սյունակները՝ ցույց տալով առարկայական չափորոշչով սահմանված վերջնարդյունքների կատարման աստիճանը 1-ին կիսամյակի համար՝ նվազման կարգով:

Ամեն առարկայի ուսուցիչ կարող է կազմել յուրաքանչյուր սովորողի բնութագիրը՝ հաշվի առնելով հետևյալ սկզբունքները.

- Պետք է շարժվել վերևից ներքև և հորիզոնական՝ գնալով ձախից աջ (Ա-Ե):

- Կարելի է ընտրել որևէ սյունակի նկարագրությունը ամբողջությամբ կամ համադրել հատվածներ տարբեր ձևակերպումներից, քանի որ նույն վերջնարդյունքի կատարման մակարդակների բաժանումը պայմանական է:
- Պետք է խուսափել մակարդակների բաժանել երեխաներին, քանի որ քիչ հավանական է, որ որևէ սովորող բոլոր վերջնարդյունքների մասով կապահովի նույն մակարդակը:
- Չի կարելի սյունակները համեմատել կամ նույնացնել միավորների (5-միավորային համակարգի կամ 10-միավորային համակարգի աստիճանների հետ):
- Բոլոր բնութագրերը կազմվել են դրական շեշտադրմամբ. պետք է բացառել «Չի կարողանում», «Չգիտի», «Դժվարանում է» արտահայտությունները:
- Ուսուցիչը կարող է ըստ անհրաժեշտության խմբագրել կամ լրամշակել ձևակերպումները՝ առավել հարմարեցնելով դրանք տվյալ սովորողի ցուցաբերած արդյունքին:
- Բնութագիրը պետք է կցել սովորողի անձնական գործին:

Ցուցումներ բնութագրերի կազմման վերաբերյալ

Ներկայացված աղյուսակների Ա սյունակում ներկայացված են առարկայի առաջին կիսամյակին ուսուցնավող թեմաների վերջնարդյունքները՝ ձևակերպված բնութագրի ձևով: Սյունակը ներկայացնում է վերջնարդյունքների ապահովման առավելագույն աստիճանը: Հաջորդ սյունակները ներկայացնում են յուրաքանչյուր վերջնարդյունքի ապահովման տարբեր աստիճանները նվազման կարգով: Վերջին՝ Ե սյունակում ներկայացված է վերջնարդյունքի ապահովման նվազագույն աստիճանը:

Ուսուցիչը կարող է յուրաքանչյուր սյունակի բնութագրերին ծանոթանալով՝ ընտրել յուրաքանչյուր երեխայի համար այն ձևակերպումները, որոնք առավելապես համապատասխանում են նրա ուսումնառության արդյունքներին կիսամյակի ավարտին: Այս աշխատանքը կատարելիս ուսուցիչը պետք է հիմնվի ողջ կիսամյակի

ընթացքում կիրառած ձևավորող գնահատման արդյունքների (ստուգաթերթերի, համառոտ գրառումների, ռուբրիկների, դիտարկումների, հայտորոշիչ առաջադրանքների և այլ գործիքների պարբերական կիրառման վերլուծությունների վրա):

Բնութագրերը կարող են կազմվել տարբեր սյունակների բնութագրումներից ընտրված նկարագրություններից՝ ամբողջացնելով սովորողի ամփոփ բնութագիրը տվյալ առարկայից: Նույն տողից միայն մեկ բնութագրիչ կարող է ներառվել կոնկրետ սովորողի բնութագրի մեջ, քանի որ յուրաքանչյուր տողում նկարագրված են նույն վերջնարդյունքի ապահովման տարբեր աստիճանները: Չի բացառվում, որ սյունակներից մեկի բնութագրումները լիովին համընկնեն կոնկրետ սովորողի առաջադիմության արդյունքներին, սակայն առավել հաճախ դա կլինի տարբեր սյունակներից առանձնացված բնութագրիչներից կազմված խճանկար:

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի կիսամյակային ամփոփոխ բնութագրի ձևանմուշ

Կազմեց Լուսինե Ալեքսանյանը

1-ին կիսամյակի հիմնական գաղափարներ ը, թեմաները	Ա	Բ	Գ	Դ	Ե
1. Ինքնուր յուն Թեմա Ով եմ ես	Նկարագրում է իրեն, իր զբաղմունքները, նախասիրությունները, հետաքրքրությունները, համեմատում է մյուսների հետ, մեկնաբանում է դրանց կապը իր նպատակների հետ:	Նկարագրում է իրեն, իր զբաղմունքները, նախասիրությունները, հետաքրքրությունները:	Նկարագրում է իրեն, իր զբաղմունքները:	Թվարկում է իր որոշ հատկանիշներ և որոշ սիրած զբաղմունքներ:	Տրված հատկանիշներից ընտրում է որոշ (2-3) նկարագրեր, որոնք վերաբերում են իրեն:

	Տարբերակում և արտահայտում է իր զգացմունքներն ու հույզերը տարբեր միջոցներով, նաև տարբերակում և համադրում է տարբեր զգայարաններով ստացած տեղեկությունները: Ներկայացնում է, որ նույն տեղեկությունը կարելի է տարբեր զգայարաններով ստանալ:	Տարբերակում և արտահայտում է իր զգացմունքներն ու հույզերը տարբեր միջոցներով: Տարբերակում է տարբեր զգայարաններով ստացած տեղեկությունները:	Տարբերակում և արտահայտում է որոշ զգացմունքներ և հույզեր: Տարբերակում է, թե ո՞ր տեղեկությունը ո՞ր զգայարանով է ստանում: ո՞ր զգայարանով է ստանում:	Տարբերակում և արտահայտում է որոշ հույզեր: Տարբերակում է, թե ո՞ր տեղեկությունը ո՞ր զգայարանով է ստանում՝ նկարների օգնությամբ:	Տարբերակում է ուրախություն և տխրություն արտահայտող պատկերները: Թվարկում է մի քանի զգայարան՝ աչք, ականջ, բերան...
	Նկարագրում է իրեն՝ անցյալում, ներկայում և ապագայում և տարբեր ժամանակներում կատարված իրադարձությունները:	Նկարագրում է իրեն անցյալում, ներկայում և պատկերացնում է ապագայում: Տարբերակում է նկարագրված իրադարձության կատարման ժամանակը:	Նկարագրում է իրեն անցյալում և ներկայում:	Ընտրում և համապատասխանեցնում է ներկային և անցյալին վերաբերող որոշ նկարագրություններ:	Տարբերակում է ներկայում կատարվող, իրեն վերաբերող որոշ գործողություններ:
	Կազմում է օրվա ռեժիմ՝ ճիշտ բաշխելով օրը աշխատանքի, հանգստի,	Կազմում է օրվա ռեժիմ՝ ճիշտ բաշխելով օրը աշխատանքի, հանգստի,	Տարբերակում է ճիշտ կազմված ռեժիմի քայլաշարը:	Ընտրում և դասավորում է օրվա անելիքներն ըստ հերթականության:	Կարողանում է ընտրել օրվա իր անելիքներից 2-3 գործողություն՝ ըստ

	զբաղմունքի, քնի միջև: Ունի ժամանակը արդյունավետ տնօրինելու կարողություն:	զբաղմունքի, քնի միջև:			հերթականությա ն:
	Բացատրում է մարմնի տարբեր մասերի փոխկապվածությունն ը որպես մեկ համակարգի:	Բացատրում է, որ մարմնի բոլոր մասերը գործում են փոխկապված:	Գիտի մարմնի մասերը և որ դրանք միմյանց հետ փոխկապված են:	Թվարկում և ցույց է տալիս մարմնի մասերը:	Թվարկում և ցույց է տալիս մարմնի հիմնական մասերը (գլուխ, իրան, ոտքեր, ձեռքեր...):
	Ուշադիր է և հոգատար իր շուրջն եղած բոլոր մարդկանց հանդեպ, պատրաստակամ է աջակցելու բոլորին:	Պատրաստակամ է հեշտացնելու և հավասար հնարավորությունն ապահովելու բոլորի համար:	Պատրաստակամ է օգնելու, չունի իրենից տարբեր մարդկանց ծաղրելու, ճնշելու հակում:	Օգնում է ընկերներին՝ երբ հուշում են այդ մասին:	
	Հիմնավորում է որ հիգիենայի պահպանումը առողջության գրավականներից մեկն է: Գիտի և պահպանում է անձնական հիգիենայի բոլոր կանոնները: Կարևորում է մաքուր օդում գտնվելն ու կոփվելը:	Գիտի և պահպանում է անձնական հիգիենայի կանոնները՝ հաճախակի լվացվում է, հետևում է մաքրությանը: Տարբերակում է անձնական հիգիենայի անհատական պարագաները: Հաճույքով է մարմնամարզությա մբ զբաղվում, և	Հետևում է հիգիենայի որոշ կանոնների: Տարբերակում է անձնական հիգիենայի անհատական պարագաները: Ցուցադրում է ձեռքերը և ատամները ճիշտ լվանալու շարժումները: Ակտիվ է մարմնամարզությոն անելիս և	Թվարկում է անձնական հիգիենայի հիմնական կանոնները, ցույց է տալիս լվացվելու և ատամները լվանալու որոշ շարժումներ: Կատարում է մարմնամարզություն՝ հետևելով օրինակին:	Ցույց է տալիս լվացվելու որոշ շարժումներ:

		գիտի մաքուր օդում գտնվելու առողջարար լինելու մասին:	մաքուր օդում գտնվելիս:		
Հիմնական գաղափար՝ Անվտանգություն Թեմա 2 – Ես ապահով եմ	Նկարագրում է առողջ և սննդարար ուտելիքը, սննդակարգը, կարևորում է նախաճաշելու սովորությունը:	Նկարագրում է առողջ և սննդարար ուտելիքը, կարևորում է նախաճաշելը:	Տարբերակում է առողջ և անառողջ սնունդը, գիտի, որ պետք է նախաճաշել:	Նշում է որոշ առողջ և անառողջ սննդի օրինակներ:	Տրված օրինակներից ընտրում է որոշ առողջ և անառողջ սնունդ ցույց տվող որոշ օրինակներ:
	Խմբավորում է սննդամթերքը հիմնական խմբերում, տարբերակում է կենդանական և բուսական ծագման սննդամթերքները:	Տարբերակում է սննդամթերքի հիմնական խմբերը, նշում է կենդանական և բուսական ծագման սննդատեսակները:	Տարբերակում է սննդամթերքի խմբերը՝ որոշ բացթողումներով և նշում է որոշ բուսական և որոշ կենդանական ծագման սննդատեսակներ :	Օգնությամբ համապատասխանեցնում է սննդամթերքները իրենց համապատասխան խմբերին, նաև բուսական և կենդանական ծագմանը:	Օգնությամբ համապատասխանեցնում է որոշ, առավել հաճախ օգտագործվող սննդամթերքները իրենց համապատասխան խմբերին:
	Կարևորում է սնվելու ռեժիմի պահպանումը:	Գիտի, որ սնունդը միշտ պետք է նույն պարբերականությամբ ընդունել:	Գիտի, որ ամեն օր նույն ժամերին պետք է սնվել:		
	Տարբերակում և ընտրում է առողջ սնունդ: Տարբերում է փչացած սնունդը:	Հիմնականում ընտրում է առողջ սնունդ և տարբերում է փչացած սնունդը:	Ընտրում է առողջ սննդի որոշ օրինակներ: Տարբերում է, փչացած սննդի որոշ օրինակներ:	Ցույց է տալիս որոշ առողջ և որոշ անառողջ սննդի օրինակներ:	

	Բացատրում է, որ սնունդը և ջուրը անհրաժեշտ են մարմնի աճի, զարգացման և եռանդի համար:	Գիտի, որ սնունդը և ջուրը անհրաժեշտ են մարմնի աճի, զարգացման և եռանդի համար:	Նշում է, որ պետք է սնվել և հաճախ ջուր խմել առույգ լինելու և մեծանալու համար:	Տեսնում է կապը սնվելու և աճելու, մեծանալու միջև:	
	Թվարկում է վտանգները՝ տանը, դպրոցում և փողոցում և խմբավորում է անվտանգության կանոններն ըստ համապատասխանության:	Տարբերակում է վտանգները՝ տանը, դպրոցում և փողոցում և խմբավորում է անվտանգության կանոնները վտանգներին համապատասխան:	Թվարկում է որոշ վտանգներ տանը, դպրոցում և փողոցում, նշում է իր թվարկած վտանգներից խուսափելու անվտանգության որոշ կանոնները:	Կարողանում է նկարներից ընտրել վտանգ պարունակող նկարները և ընտրում է համապատասխան վարքականոնների նկարները:	Նկարներից ընտրում է որոշ վտանգ պարունակող նկարներ և ընտրում է դրանց համապատասխան վարքականոնների որոշ նկարներ:
	Կիրառում և հետևում է անվտանգության պարզ կանոններին երկրաշարժի ժամանակ տանը, դպրոցում կամ փողոցում:	Հետևում է անվտանգության պարզ կանոններին երկրաշարժի ժամանակ տանը, դպրոցում կամ փողոցում:	Կատարում է անվտանգության կանոններին հետևելու հրահանգները:	Կարողանում է հետևել անվտանգությանը վերաբերող հրահանգներին, երբեմն՝ օգնությամբ:	Օգնությամբ կատարում է անվտանգությանը վերաբերող հրահանգները:
	Թվարկում է վտանգի դեպքում օգնության համապատասխան հեռախոսահամարները և գիտի, թե ումից պետք է օգնություն խնդրի:	Գիտի վտանգի դեպքում օգնության հեռախոսահամարները և թե ումից պետք է օգնություն խնդրի:	Համապատասխանեցնում է օգնության հեռախոսահամարները՝ ծառայություններին:	Գիտի, թե ումից պետք է օգնություն խնդրի վտանգի դեպքում:	

	Ներկայացնում է վնասակար սովորությունները: Գիտի, որ ծխախոտի ծուխը վնասակար է առողջությանը և չպետք է մնա ծխողների շրջապատում, այլ պետք է արագ հեռանա տարածքից, զգուշացնի մեծերին, որ ծխելը վնաս է առողջությանը և օդափոխի սենյակը:	Թվարկում է վնասակար սովորությունները: Գիտի, որ ծխախոտի ծուխը վնասակար է առողջությանը և որ չպետք է մնա ծխողների շրջապատում, այլ պետք է արագ հեռանա այդ տարածքից:	Թվարկում է որոշ վնասակար սովորություններ, այդ թվում՝ ծխելը, Նշում է, որ ծխելը և ծուխը վնասակար է առողջությանը:	Նկարներում տարբերակում է վնասակար սովորությունները, այդ թվում՝ ծխելը:	Նկարներում նշում է որոշ վնասակար սովորություններ, նաև ծխելը:
	Օրինակներ է բերում վարակիչ հիվանդությունների փոխանցման և դրանց կանխարգելման ուղիների վերաբերյալ: Գիտի, որ կան վարակիչ հիվանդություններ, որոնց տարածումը կապված է պատվաստումներից հրաժարվելու հետ: Բացատրում է, որ առողջությունը կախված է նաև միջավայրի մաքրությունից:	Օրինակներ է բերում վարակիչ հիվանդությունների փոխանցման և դրանց կանխարգելման ուղիների վերաբերյալ, այդ թվում՝ պատվաստումը: Նշում է առողջության և շրջակա միջավայրի մաքրություն միջև եղած կապի մասին:	Գիտի, որ պետք է օդափոխի սենյակը և տարածքը, ուր գտնվում է: Նշում է, որ կան հիվանդություններ, որոնք փոխանցվում են մեկից մյուսին՝ վարակում են միմյանց: Նշում է, որ պետք է լվացվել, պահպանել հիգիենայի կանոնները և դիմակ կրել, որպեսզի չհիվանդանա:	Ընտրում է վարակների տարածման եղանակները ցույց տվող նկարներ, ինչպես նաև դրանցից խուսափելու եղանակ ցույց տվող նկարներ:	Ընտրում է վարակների տարածման եղանակներ ցույց տվող որոշ նկարներ, ինչպես նաև դրանցից խուսափելու եղանակ ցույց տվող որոշ նկարներ:

			Հիվանդանալու պատճառների մեջ նշում է նաև շրջապատի աղտոտվածությո ւնը:		
Հիմնական գաղափար՝ Փոխհարաբեր ություններ Թեմա 3 – Ես մենակ չեմ	Նկարագրում է տարբեր կազմով ընտանիքները, նրանց դերերն ու պարտականությունն երը, այդ թվում՝ իր, առանց տարանջատելու դրանք կանանց և տղամարդկանց գործերի:	Նակարագրում է տարբեր կազմով ընտանիքները, մեծ և փոքր, դերերն ու պարտականությունն երն ընտանիքում, առանց տարանջատելու դրանք կանանց և տղամարդկանց գործերի:	Նակարագրում է տարբեր կազմով ընտանիքները, մեծ և փոքր, դերերն ու պարտականությո ւններն իրենց ընտանիքում:	Նկարագրում է իր ընտանիքը, գիտի, որ ընտանիքները տարբեր կազմ կարող են ունենալ: Ներկայացնում է որոշ դերեր և պարտականությ ուններ ընտանիքում:	Ընտրում և նկարներով կազմում է իր ընտանիքը, ընտանիքի անդամներին:
	Նկարագրում է, թե ընտանիքներն ինչպես են կազմակերպում իրենց հանգիստը, ժամանցը, տոները:	Նկարագրում է հանգիստը, ժամանցը, տոները ընտանիքում:	Նկարագրում է ժամանցի որոշ ձևեր, ինչպես նաև տոներ, որոնք նշում են ընտանիքում:	Նկարագրում է ինչպես են իրենց ընտանիքում հանգստանում և տոնում որոշ տոներ:	Ցույց է տալիս որոշ դերեր, որ բնորոշ են իր ընտանիքի անդամներին: Ընտրում և ցույց է տալիս տոներ խորհրդանշող նկարներ, որոնք տոնում են իրենց ընտանիքում՝ Նոր տարի, Չատիկ և այլն:
	Հոգատար է և արդյունավետ է չփվում մերձավորների	Արդյունավետ է չփվում, կոնֆլիկտներ չի հրահրում:	Արդյունավետ է չփվում: Օգնում է ընկերներին, երբ դրա կարիքը կա:	Օգնում է ընկերներին, երբ հուշում են:	

	հետ: Արդյունավետ շփվում է, կարողանում է լսել հարգել ուրիշներին, ջանում է հաշտ լինել բոլորի հետ: Կարևորում է միմյանց օգնելը:	Պատրաստակամ է օգնել բոլորին			
	Նկարագրում և օրինակներ է բերում, թե ինչը կարող է օգնել կամ խանգարել ընկերությանը, որ որակներն են բնորոշ լավ ընկերոջը, և բացատրում է, որ դրանք վերաբերում են հավասարապես և աղջիկներին և տղաներին: Հարգում է տարբերությունները:	Նկարագրում և օրինակներ է բերում լավ և վատ ընկերոջ, ներկայացնում է դրանց բնորոշիչները, առանց տարբերակում դնելու աղջիկների և տղաների միջև: Հարգում է տարբերությունները :	Օրինակներ է բերում լավ և վատ ընկերոջ, ներկայացնում է դրանք:	Տարբերակում է լավ և վատ ընկերոջը բնորոշող վարքագծերը:	
	Բերում է մեծահասակների և հասակակիցների վարքագծի դրական և բացասական օրինակներ:	Բերում է դրական և բացասական վարքագծերի տարբեր օրինակներ:	Բերում է դրական և բացասական վարքագծերի որոշ օրինակներ:	Տարբերակում և ցույց է տալիս որոշ լավ և վատ արաքներ բնորոշող վարքագծերը:	Նշում կամ նկարների վրա ցույց է տալիս որոշ լավ և վատ արարքներ:
	Նկարագրում է իր բնակավայրում ապրող մարդկանց, զբաղմունքները,	Նկարագրում է իր բնակավայրի մարդկանց	Նկարագրում է իր բնակավայրի մարդկանց:		

	սովորույթները, առանձնահատկությունները:	գբաղմունքները, սովորույթները:			
	Կողմնորոշվում է տարածքում, գիտի տան, դպրոցի հասցեն, կարողանում է կարդալ ցուցանակները, գիտի թ հետևում է կանոններին և բացատրում է դրանց կարևորությունը:	Կողմնորոշվում է տարածքում, գիտի տան, դպրոցի հասցեն, կարողանում է կարդալ ցուցանակները, հետևում է կանոններին:	Կողմնորոշվում է տարածքում, գիտի տան, դպրոցի հասցեն, կարդում և օգնությամբ հասկանում է ցուցանակներում նշված կանոնները:	Կողմնորոշվում է տարածքում, գիտի տան, դպրոցի հասցեն, կարդում և օգնությամբ հետևում է ցուցանակներում նշված կանոններին:	Օգնությամբ հետևում է ցուցանակներում նշված կանոններին:
	Պարզ բացատրություն է տալիս, թե ինչի համար են դպրոցը, հիվանդանոցը, բանկը, ոստիկանությունը և այլն:	Պարզ բացատրում է, թե ինչի համար են դպրոցը, հիվանդանոցը, բանկը, ոստիկանությունը և այլն:	Թվարկում է դպրոցի, հիվանդանոցի, բանկի, ոստիկանության որոշ բնութագրիչներ:	Տարբերակում է դպրոցին, հիվանդանոցին, բանկին, ոստիկանությանը /վերաբերող որոշ բնութագրիչներ:	Տարբերակում է դպրոցին, հիվանդանոցին, բնորոշ ցուցադրվող որոշ բնութագրիչներ:
	Համեմատում և բնութագրում է քաղաքի և գյուղի տարբերությունները, առանձնահատկությունները:	Նկարագրում է քաղաքին և գյուղին բնորոշ առանձնահատկություններ:	Ներկայացնում է քաղաքին և գյուղին բնորոշ հիմնական հատկանիշները:	Տարբերակում է քաղաքին և գյուղին բնորոշ որոշ հատկանիշներ:	Տարբերակում և ցույց է տալիս քաղաքին և գյուղին բնորոշ որոշ հատկանիշներ:
	Թվարկում և նկարագրում է իր բնակավայրի տեսարժան վայրերն	Թվարկում և նկարագրում է իր բնակավայրի	Թվարկում և ներկայացնում է իր բնակավայրի որոշ տեսարժան	Նշում է իր բնակավայրի ամենանշանակալի վայրը,	

	ու հուշարձանները, բնակավայրի բնությունը:	տեսարժան վայրերն ու բնությունը:	վայրեր և բնության առանձնահատկո ւթյուններ:	հուշարձանը, և ուևի հոգատար վերաբերմունք դրանց հանդեպ:	
	Ցուցաբերում է պատասխանատու, խնայող և հոգատար վերաբերմունք շրջակա միջավայրի և բնակիչների հանդեպ:	Պատասխանատու է, խնայող և հոգատար շրջակա միջավայրի և բնակիչների հանդեպ:	խնայող և հոգատար է շրջակա միջավայրի և բնակիչների հանդեպ:		

Ա սյունակ (չափորոշչային)

1-ին թեմա- Ով եմ ես

Նկարագրում է իրեն, իր զբաղմունքները, նախասիրությունները, հետաքրքրությունները, համեմատում է մյուսների հետ: Մեկնաբանում է դրանց կապը իր նպատակների հետ: Տարբերակում և արտահայտում է իր զգացմունքներն ու հույզերը տարբեր միջոցներով, նաև տարբերակում և համադրում է տարբեր զգայարաններով ստացած տեղեկությունները: Ներկայացնում է, որ նույն տեղեկությունը կարելի է տարբեր զգայարաններով ստանալ: Նկարագրում է իրեն՝ անցյալում, ներկայում և ապագայում և տարբեր ժամանակներում կատարված իրադարձությունները: Ունի ժամանակը արդյունավետ տնօրինելու կարողություն: Բացատրում է մարմնի տարբեր մասերի փոխկապվածությունը որպես մեկ համակարգի: Ուշադիր է և հոգատար իր շուրջն եղած բոլոր մարդկանց հանդեպ, պատրաստակամ է աջակցելու բոլորին: Հիմնավորում է որ հիգիենայի պահպանումը առողջության գրավականներից մեկն է: Գիտի և պահպանում է անձնական հիգիենայի բոլոր կանոնները: Կարևորում է մաքուր օդում գտնվելն ու կոփվելը:

2-րդ թեմա – Ես ապահով եմ

Նկարագրում է առողջ և սննդարար ուտելիքը, սննդակարգը, կարևորում է նախաճաշելու սովորությունը: Խմբավորում է սննդամթերքը հիմնական խմբերում, տարբերակում է կենդանական և բուսական ծագման սննդամթերքները: Կարևորում է սնվելու ռեժիմի պահպանումը: Տարբերակում և ընտրում է առողջ սնունդ: Տարբերում է փչացած սնունդը: Բացատրում է, որ սնունդը և ջուրը անհրաժեշտ են մարմնի աճի, զարգացման և եռանդի համար: Թվարկում է վտանգները՝ տանը, դպրոցում և փողոցում և խմբավորում է անվտանգության կանոններն ըստ համապատասխանության: Կիրառում և հետևում է անվտանգության պարզ կանոններին երկրաշարժի ժամանակ տանը, դպրոցում կամ փողոցում: Գիտի վտանգի դեպքում օգնության համապատասխան հեռախոսահամարները և գիտի, թե ումից պետք է օգնություն խնդրի: Ներկայացնում է վնասակար սովորությունները: Գիտի որ ծխախոտի ծուխը վնասակար է առողջությանը և չպետք է մնա ծխողների շրջապատում, այլ պետք է արագ հեռանա տարածքից, զգուշացնի մեծերին, որ ծխելը վնաս է առողջությանը և օդափոխի սենյակը: Օրինակներ է բերում վարակիչ հիվանդությունների փոխանցման և դրանց կանխարգելման ուղիների վերաբերյալ: Գիտի, որ կան վարակիչ հիվանդություններ, որոնց տարածումը կապված է պատվաստումներից հրաժարվելու հետ: Բացատրում է, որ առողջությունը կախված է նաև միջավայրի մաքրությունից:

3-րդ թեմա – Ես մենակ չեմ

Նկարագրում է տարբեր կազմով ընտանիքները, նրանց դերերն ու պարտականությունները, այդ թվում՝ իր, առանց տարանջատելու դրանք կանանց և տղամարդկանց գործերի: Նկարագրում է, թե ընտանիքներն ինչպես են կազմակերպում իրենց հանգիստը, ժամանցը, տոները: Հոգատար է և արդյունավետ է շփվում մերձավորների հետ: Նկարագրում և օրինակներ է բերում, թե ինչը կարող է օգնել կամ խանգարել ընկերությանը, որ որակներն են բնորոշ լավ ընկերոջը, և բացատրում է, որ դրանք վերաբերում են հավասարապես և աղջիկներին և տղաներին: Արդյունավետ շփվում է, կարողանում է լսել հարգել ուրիշներին, ջանում է հաշտ լինել բոլորի հետ: Կարևորում է միմյանց օգնելը: Բերում է մեծահասակների և հասակակիցների վարքագծի դրական և բացասական օրինակներ: Հարգում է տարբերությունները: Նկարագրում է իր բնակավայրում ապրող մարդկանց, զբաղմունքները, սովորույթները, առանձնահատկությունները: Կողմնորոշվում է տարածքում, գիտի տան, դպրոցի հասցեն, կարողանում է կարդալ ցուցանակները, գիտի կանոնները և դրանց կարևորությունը: Պարզ բացատրություն է տալիս, թե ինչի համար են դպրոցը, հիվանդանոցը, բանկը, ոստիկանությունը և այլն: Համեմատում և բնութագրում է քաղաքի և գյուղի տարբերությունները, առանձնահատկությունները: Թվարկում և նկարագրում է իր բնակավայրի տեսարժան վայրերն ու հուշարձանները, բնակավայրի բնությունը: Ցուցաբերում է պատասխանատու, խնայող և հոգատար վերաբերմունք շրջակա միջավայրի և բնակիչների հանդեպ:

Բ սյունակ 1-ին թեմա

Նկարագրում է իրեն, իր զբաղմունքները, նախասիրությունները, հետաքրքրությունները: Տարբերակում և արտահայտում է իր զգացմունքներն ու հույզերը տարբեր միջոցներով: Նկարագրում է իրեն անցյալում, ներկայում և պատկերացնում է ապագայում: Տարբերակում է նկարագրված իրադարձության կատարման ժամանակը: Կազմում է օրվա ռեժիմ՝ ճիշտ բաշխելով օրը աշխատանքի, հանգստի, զբաղմունքի, քնի միջև: Տարբերակում է տարբեր զգայարաններով ստացած տեղեկությունները, Բացատրում է, որ մարմնի բոլոր մասերը գործում են փոխկապված: Պատրաստակամ է հեշտացնելու և հավասար հնարավորություններ ապահովելու բոլորի համար: Գիտի և պահպանում է անձնական հիգիենայի կանոնները՝ հաճախակի լվացվում է, հետևում է մաքրությանը: Տարբերակում է անձնական հիգիենայի անհատական պարագաները: Հաճույքով է մարմնամարզությամբ զբաղվում, և գիտի մաքուր օդում գտնվելու առողջարար լինելը:

2-րդ թեմա

Նկարագրում է առողջ և սննդարար ուտելիքը, կարևորում է նախաճաշելը: Տարբերակում է սննդամթերքի հիմնական խմբերը, նշում է կենդանական և բուսական ծագման սննդատեսակները: Գիտի, որ սնունդը միշտ պետք է նույն

պարբերականությամբ ընդունել: Ընտրում է առողջ սնունդ: Տարբերում է փչացած սնունդը: Բացատրում է, որ սնունդը և ջուրը անհրաժեշտ են մարմնի աճի, զարգացման և եռանդի համար: Տարբերակում է վտանգները՝ տանը, դպրոցում և փողոցում և խմբավորում է անվտանգության կանոնները վտանգներին համապատասխան: Հետևում է անվտանգության պարզ կանոններին երկրաշարժի ժամանակ տանը, դպրոցում կամ փողոցում: Գիտի վտանգի դեպքում համապատասխան օգնության հեռախոսահամարները և գիտի, թե ումից պետք է օգնություն խնդրի վտանգի ժամանակ: Թվարկում է վնասակար սովորությունները: Գիտի որ ծխախոտի ծուխը վնասակար է առողջությանը և որ չպետք է մնա ծխողների շրջապատում, այլ պետք է արագ հեռանա այդ տարածքից: Օրինակներ է բերում վարակիչ հիվանդությունների փոխանցման և դրանց կանխարգելման ուղիների վերաբերյալ, այդ թվում՝ պատվաստումը: Նշում է առողջության և շրջակա միջավայրի մաքրություն միջև եղած կապի մասին:

3-րդ թեմա

Նկարագրում է տարբեր կազմով ընտանիքները, մեծ և փոքր, դերերն ու պարտականություններն ընտանիքում, առանց տարանջատելու դրանք կանանց և տղամարդկանց գործերի: Նկարագրում է հանգիստը, ժամանցը, տոները ընտանիքում: Նկարագրում և օրինակներ է բերում լավ և վատ ընկերոջ, ներկայացնում է դրանց բնորոշիչները, առանց տարբերակում դնելու աղջիկների և տղաների միջև: Արդյունավետ է շփվում, կոնֆլիկտներ չի հրահրում: Պատրաստակամ է օգնել բոլորին Բերում է դրական և բացասական վարքագծերի տարբեր օրինակներ: Հարգում է տարբերությունները: Նկարագրում է իր բնակավայրի մարդկանց զբաղմունքները, սովորույթները: Կողմնորոշվում է տարածքում, գիտի տան, դպրոցի հասցեն, կարողանում է կարդալ ցուցանակները, հետևում է կանոններին: Պարզ բացատրում է, թե ինչի համար են դպրոցը, հիվանդանոցը, բանկը, ոստիկանությունը և այլն: Նկարագրում է քաղաքին և գյուղին բնորոշ առանձնահատկություններ: Թվարկում և նկարագրում է իր բնակավայրի տեսարժան վայրերն ու բնությունը: Պատասխանատու է, խնայող և հոգատար շրջակա միջավայրի և բնակիչների հանդեպ:

Գ սյունակ

1-ին թեմա

Նկարագրում է իրեն, իր գբաղմունքները: Տարբերակում և արտահայտում է որոշ զգացմունքներ և հույզեր: Նկարագրում է իրեն անցյալում և ներկայում: Տարբերակում է ճիշտ կազմված ռեժիմի քայլաշարը: Տարբերակում է, թե ո՞ր տեղեկությունը ո՞ր զգայարանով է ստանում: Գիտի մարմնի մասերը և որ դրանք գործում են փոխկապված: Պատրաստակամ է օգնելու, չունի իրենից տարբեր մարդկանց ծաղրելու, ճնշելու հակում: Հետևում է հիգիենայի որոշ կանոնների: Տարբերակում է անձնական հիգիենայի անհատական պարագաները: Ցուցադրում է ձեռքերը և ատամները ճիշտ լվանալու շարժումները: Ակտիվ է մարմնամարզություն անելիս և մաքուր օդում գտնվելիս:

2-րդ թեմա

Տարբերակում է առողջ և անառողջ սնունդը, գիտի, որ պետք է նախաճաշել: Տարբերակում է սննդամթերքի խմբերը՝ որոշ բացթողումներով և նշում է որոշ բուսական և որոշ կենդանական ծագման սննդատեսակներ: Գիտի, որ ամեն օր նույն ժամերին պետք է սնվել: Նշում է, որ պետք է սնվել և հաճախ ջուր խմել առույգ լինելու և մեծանալու համար: Թվարկում է որոշ վտանգներ տանը, դպրոցում և փողոցում, նշում է իր թվարկած վտանգներից խուսափելու անվտանգության որոշ կանոնները: Կատարում է անվտանգության կանոններին հետևելու հրահանգները: Թվարկում է որոշ վնասակար սովորություններ, այդ թվում՝ ծխելը, նշում է, որ ծխելը և ծուխը վնասակար է առողջությանը: Գիտի, որ պետք է օդափոխի սենյակը և տարաշքը, ուր գտնվում է: Նշում է, որ կան հիվանդություններ, որոնք փոխանցվում են մեկից մյուսին՝ վարակում են միմյանց: Նշում է, որ պետք է լվացվել, պահպանել հիգիենայի կանոնները և դիմակ կրել, որպեսզի չհիվանդանալ: Հիվանդանալու պատճառների մեջ նշում է նաև շրջապատի աղտոտվածությունը:

3-րդ թեմա

Նակարագրում է տարբեր կազմով ընտանիքները, մեծ և փոքր, դերերն ու պարտականություններն իրենց ընտանիքում: Նկարագրում է ժամանցի որոշ ձևեր և տոներ, որոնք նշում են ընտանիքում: Օրինակներ է բերում լավ և վատ ընկերոջ, ներկայացնում է դրանք: Արդյունավետ է շփվում: Օգնում է ընկերներին, երբ դրա կարիքը կա: Բերում է դրական և բացասական վարքագծերի որոշ օրինակներ: Նկարագրում է իր բնակավայրի մարդկանց: Կողմնորոշվում է տարածքում, գիտի տան, դպրոցի հասցեն, կարդում և օգնությամբ հասկանում է ցուցանակներում նշված կանոնները: Թվարկում է դպրոցի, հիվանդանոցի, բանկի, ոստիկանության որոշ բնութագրիչներ: Ներկայացնում է քաղաքին և գյուղին բնորոշ որոշ հատկանիշներ: Թվարկում և ներկայացնում է իր բնակավայրի որոշ տեսարժան վայրեր և բնության առանձնահատկություններ: Խնայող և հոգատար է շրջակա միջավայրի և բնակիչների հանդեպ:

Դ սյունակ

1-ին թեմա

Թվարկում է իր որոշ հատկանիշներ և որոշ սիրած զբաղմունքներ: Տարբերակում և արտահայտում է որոշ պարզ հույզեր: Ընտրում և համապատասխանեցնում է ներկային և անցյալին վերաբերող նկարագրությունները: Ընտրում և դասավորում է օրվա անելիքներն ըստ հերթականության: Թվարկում է անձնական հիգիենայի հիմնական կանոնները, ցույց է տալիս լվացվելու և ատամները լվանալու որոշ շարժումներ: Կատարում է մարմնամարզություն՝ հետևելով օրինակին:

2-րդ թեմա

Նշում է որոշ առողջ և անառողջ սննդի օրինակներ: Օգնությամբ համապատասխանեցնում է սննդամթերքները իրենց համապատասխան խմբերին, նաև բուսական և կենդանական ծագմանը: Տեսնում է կապը սնվելու և աճելու, մեծանալու միջև: Կարողանում է նկարներից ընտրել վտանգ պարունակով նկարները և ընտրում է համապատասխան վարքականոնների նկարները: Կարողանում է հետևել անվտանգությանը վերաբերող հրահանգներին, երբեմն՝ օգնությամբ: Նկարներում տարբերակում է վնասակար սովորությունները, այդ թվում՝ ծխելը: Ընտրում է վարակների տարածման եղանակները ցույց տվող նկարներ, ինչպես նաև դրանցից խուսափելու եղանակ ցույց տվող նկարներ:

3-րդ թեմա

Նկարագրում է իր ընտանիքը, գիտի, որ ընտանիքները տարբեր կազմ կարող են ունենալ: Ներկայացնում է որոշ դերեր և պարտականություններ ընտանիքում: Նկարագրում է ինչպես են իրենց ընտանիքում հանգստանում և տոնում որոշ տոներ: Տարբերակում է լավ և վատ ընկերոջը բնորոշող վարքագծերը: Օգնում է ընկերներին, երբ հուշում են: Կողմնորոշվում է տարածքում, գիտի տան, դպրոցի հասցեն, կարդում և օգնությամբ հետևում է ցուցանակներում նշված կանոններին: Տարբերակում է դպրոցի, հիվանդանոցի, բանկի, ոստիկանության ցուցադրվող որոշ բնութագրիչներ: Տարբերակում է քաղաքին և գյուղին բնորոշ որոշ հատկանիշներ: Նշում է իր բնակավայրի ամենանշանակալի վայրը, հուշարձանը և ունի հոգատար վերաբերմունք դրանց հանդեպ:

Ե սյունակ

1-ին թեմա

Տրված հատկանիշներից ընտրում է որոշ նկարագրեր, որոնք վերաբերում են իրեն: Կարողանում է ընտրել օրվա անելիքներից 2-3 գործողություն՝ ըստ հերթականության: Տարբերակում է ուրախություն և տխրություն արտահայտող պատկերները: Թվարկում է մի քանի զգայարան՝ աչք, ականջ, բերան... Թվարկում և ցույց է տալիս մարմնի գլխավոր մասերը:

2-րդ թեմա

Տրված օրինակներից ընտրում է որոշ առողջ և անառողջ սնունդ ցույց տվող օրինակներ: Օգնությամբ համապատասխանեցնում է որոշ, առավել հաճախ օգտագործվող սննդամթերքները իրենց համապատասխան խմբերին: Նկարներից ընտրում է որոշ վտանգ պարունակով նկարներ և ընտրում է դրանց համապատասխան վարքականոնների որոշ նկարներ: Օգնությամբ կատարում է անվտանգությանը վերաբերող հրահանգները: Նկարներում նշում է որոշ վնասակար սովորություններ, նաև ծխելը: Ընտրում է վարակների տարածման եղանակներ ցույց տվող որոշ նկարներ, ինչպես նաև դրանցից խուսափելու եղանակ ցույց տվող որոշ նկարներ:

3-րդ թեմա

Ընտրում և նկարներով կազմում է իր ընտանիքը, ընտանիքի անդամներին: Ցույց է տալիս որոշ դերեր, որ բնորոշ են իր ընտանիքի անդամներին: Ընտրում և ցույց է տալիս տոներ խորհրդանշող նկարներ, որոնք տոնում են իրենց ընտանիքում՝ Նոր տարի, Չատիկ և այլն: Տարբերակում և ցույց է տալիս որոշ լավ և վատ արաքներ բնորոշող վարքագծերը: Օգնությամբ հետևում է ցուցանակներում նշված կանոններին: Տարբերակում է դպրոցին, հիվանդանոցին, բնորոշ ցուցադրվող որոշ բնութագրիչներ: Տարբերակում և ցույց է տալիս քաղաքին և գյուղին բնորոշ որոշ հատկանիշներ: